

ՅՈՒՆՈՒԱՐ

ՆԵՐՍԵՎ ԱՔԵՂԱՅ ԱՆՈՅԵԱՆ

«ՍԻՈՆ»

ԵՐՈՒՍԱՂԱՄԻ ՆԱՀԱՊԵՏԸ

(90-ամեայ յոբելեանին առթիւ)

Թէ ինչպիսի բացառիկ երեւոյթ է պարբերական մամուլի կեանքին մէջ բոլորել 90-ամեայ անընդմէջ հանգրուան մը, լաւագոյնս կարելի է գնահատել սա փաստով՝ որ «ՍԻՈՆ» Սփիւռքի մէջ հրատարակուող հնագոյն պարբերաթերթերէն մին է։ Ունեցած է երկու ծնունդ. առաջինը 1866-ին, և ապրած լոկ 12 տարի, մինչեւ 1877-ին վերջը, իսկ երկրորդը՝ 1927-ին, որ եղաւ նոր սկիզբ մը, իբրեւ յղացում նոր ժամանակներու, նոր պայմաններու և նոր մտայնութեամբ անձերու։

Ինչպէս ամէն մեծ գործ, որ ժամանակի մէջ ակօսներ կը բանայ, «ՍԻՈՆ»-ն ալ մտքի երկունքն է երկու արծուահայեաց, տեսլապաշտ հոգիներու, երկու Սաղիմաշունչ տիտաններու Նսայի Դ. Կարապետեան Պատրիարքի և Եղիշէ Ա. Դուրեան Պատրիարքի։

Նսայի Պատրիարք, ըմբռնելով Մայրավանքիս մտաւորական կեանքի զարգացման պէտքը, ոչ միայն զարկ տուաւ ժառանգաւորաց Վարժարանին, որուն 175-ամեայ յոբելեանը պիտի տօնենք այս տարի, այլ նաեւ փութաց գործօն շարժումի մէջ դնել Ս. Յակոբայ մամուլը, Սաւալանի հսկողութեամբ, և հրատարակել տուաւ հին ու նոր գործեր և Պատրիարքութիւնը օժտեց պաշտօնական թերթով մը, «ՍԻՈՆ»-ով, որպէսզի Ս. Յակոբ Սիրոնի բարձունքէն տայ իր պատգամները հայ ժողովուրդին, և կրօնական, գրական, բանասիրական նիւթերով յարաբերութեան մէջ մտնէ ազգին հետ։

«ՍԻՈՆ» իր ժամանակին փնտռուած ամսաթերթը եղաւ Հայ ժողովուրդին, իբրեւ արտայայտութիւն ողջմիտ ուղղութեան մը, իսկ Մայրավանքէն ներս ալ հիանալի ազդակ մը դարձաւ ուսումնական և գրական շարժում մը ստեղծելու թէ՛ Միաբանութեան և թէ՛ Ժառանգաւորաց Վարժարանին, որուն աշակերտները ՍԻՈՆ-ի էջերուն մէջ փորձեցին իրենց գրչին առաջին արժէքները։

Ս. Աթոռոյս 95-րդ Պատրիարք՝ Եղիշէ Արք. Տէրտէրեանի խօսքով. «Նպատակն է որ տրուած Հաստատութեան մը կամ ձեռնարկի մը տեսակը և ինքնութիւնը կը ճշդէ. և անոր հաւատարմօրէն գործադրութիւնն է որ նախ առաջը կ'առնէ թեքումներու և այլասերումներու, և ապա կ'ապահովէ անոր գոյութեան տեսականացումը»։ 90 տարիներ առաջ վերսկսած «ՍԻՈՆ»-ի նոր շրջանի հիմնադիրն ու գործակիցները հաւատացին իրենց գործին վեհութեան և կարեւորութեան, տեսանողի ներշնչումով յուսացին արդիւնքին, Տէրը օրհնեց անոնց ու հասցուց իրենց հունձքը։ Մեր հոգիներու մէջ իրենց մասնաւոր տեղը ունեցող, բայց կամաց-կամաց պատմութեան անցնող պատկառելի այդ մարդոց արգասիքը շարունակուեցաւ ահաւասիկ իննսունամեակ մը, իրենց իսկ պատրաստած յաջորդներուն կողմէ։ «ՍԻՈՆ»-ի սեղմ էջերէն ամսէ ամիս Հայ ժողովուրդին տրուեցաւ մտքի և հոգիի սնունդ։

Նոր շրջանի ամբողջ 90-ամեակի ընթացքին կրօնա-բարոյական, պատմական իր գլխաւոր դերին քով «ՍԻՈՆ» ունեցաւ նաեւ բանասիրական և գրական իր բաժինները, որոնք կարեւոր տեղ գրաւեցին ընդհանուր կազմին մէջ, և ունեցան հանգամանաւոր և հմուտ գրիչներ, արդէն իսկ հեղինակութիւն եղող մտքի մշակներ։

«ՍԻՈՆ»-ի նոր շրջանի հիմնադիրը, Երանելի Եղիշէ Պատրիարք Դուրեան, առաջին թիւի առաջին էջին մէջ հետեւեալ բառերով կ'ուրուագծէ անոր կատարելիք կրօնական դերը. «Երկար տարիներէ ի վեր լուծ Սիօնի ձայնը վերստին լսեցնելով՝ Ս. Աթոռս այն համոզումը ունի թէ գոնէ մասամբ պիտի կրնայ գոհացում տալ հոգեւոր այն պէտքին՝ զոր կը զգայ մեր բարեպաշտ ժողովուրդը, ուր և ի՛նչ պայմաններու մէջ ալ որ ապրի:

«ՍԻՈՆ»-ը սակայն՝ մեր ժողովուրդին զարգացած մասին ալ տրամադրուած է խօսելու, Աւետարանէն բխող խաղաղիկ և փրկարար ներշնչումներ տալու համար անո՛նց՝ որոնք իմաստութիւնն ունին իրենց մտքի բոլոր հայեցողութիւններուն հետ հաշտ ու համարձակ լծորդելու մարդկային զգացումներուն ամենէն նուիրականին, կրօնական հրամայականը»:

Բարգէն Նպս. Կիւլէսէրեան, ստանձնելէ ետք «ՍԻՈՆ»-ի խմբագրապետութիւնը՝ անոր կրօնական դերը և ուղղութիւնը կը լուսաբանէ այսպէս. «Մենք կը հաւատանք որ հայ ժողովուրդը խորունկ կարօտութիւն մը ունի Աւետարանի մաքուր սնունդին և յստակ լոյսին: Այդ կարօտութիւնը կ'աղաղկէ այսօր, մանաւանդ մեր գաղութներու մէջ: Խոր կը դիտենք որ կրօնի ներշնչումներէն զրկուած են իրենց բնաշխարհէն տարագիր մեր եղբայրները, որոնք կը տառապին հոգեկան անհամապատասխանութիւններով:

«ՍԻՈՆ պիտի ջանայ տալ անոնց այդ ներշնչումներուն կազդոյրը»:

Սկզբնական շրջանին «ՍԻՈՆ» իր շուրջ հաւաքած է կրօնական գրողներու լաւագոյն փոքր խումբ մը: Մեծ հոգիներու այս խումբը կը գլխաւորուի օրուան Պատրիարք Եղիշէ Դուրեանով: Դժբախտաբար անոր հիւանդութիւնը և յառաջացեալ տարիքը թոյլ չեն տուած որ աւելի լայն շափով մասնակցի «ՍԻՈՆ»-ի կրօնական բաժնին:

Նոր շրջանի սկզբնական օրերուն «ՍԻՈՆ»-ի գլխաւոր կրօնական յօդուածագիրն էր Բարգէն Նպս. Կիւլէսէրեան, որ եղած է նաեւ «ՍԻՈՆ»-ի առաջին խմբագրապետը 1927-1930 թթ.:

1930-1932 թուականներուն «ՍԻՈՆ»-ը խմբագրած է Տ. Տիրան Վարդապետ Ներսոյեան:

Այնուհետեւ հոգելոյս Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Գուշակեանի եօթնամեայ պատրիարքութեան շրջանին, անոր խմբագրապետութեան տարիներուն, «ՍԻՈՆ» կը շարունակէ հրատարակուիլ և ճշմարտապէս կը դառնայ «Հայ Եկեղեցոյ ծանր հրետանին» պատրիարքական անոր սքանչելի խմբագրականներով, և բովանդակալից «Նոթք և Նիշք»-երով, որոնց մէջ կ'ընդգրկուեն պայծառամտութեամբ Սփիւռքի ազգային-եկեղեցական ողջ հայ կեանքը՝ իր կարեւոր իրադարձութիւններով, ժամանակակից բազմապիսի հրատապ հարցերու լուսաբանութեամբ: Եղած են տարիներ, օրինակ 1937, երբ կրօնական բոլոր յօդուածները, 18 կտոր, ելած են իր գրչէն:

Տ. Թորգոմ Պատրիարքի օրով «ՍԻՈՆ» հանդիսացաւ լուրջ հրատարակութիւն մը, եկեղեցական, մշակութային ուշագրաւ երեւոյթ մը հայ լրագրութեան պատմութեան և Հայ Եկեղեցոյ ժամանակակից տարեգրութեանց մէջ: Թորգոմ Պատրիարքի խմբագրական, հրապարակախօսական գործունէութեան հաւատամքն էր՝ Սփիւռքի մէջ «Հայ ազգութեան պահպանումը Հայ Եկեղեցիով միայն»:

Արդարեւ մեծ է և եզակի «ՍԻՈՆ»-ի կատարած դերը մեր Եկեղեցոյ ժամանակակից պատմութեան մէջ, որպէս եկեղեցագիտական և դաւանաբանական մտքի հանդիսարան, որպէս Հայ Եկեղեցոյ ինքնուրոյնութեան, լուսաւորչաւանդ ուղղափառութեան և աւանդոյթներու պաշտպանութեան ամբիոն:

Թորգոմ Պատրիարքի մահէն վերջ, 1939 թուականի Փետրուարին, «ՍԻՈՆ»-ի վերոյիշեալ եկեղեցական, մշակութային, հրապարակախօսական աւանդութիւնը կը շարունակուի անխափան մինչեւ ցայսօր: Աւելի քան 50 տարիներ «ՍԻՈՆ» ձեռնհասօրէն խմբագրած է Թորգոմ Պատրիարք Գուշակեանի բազմաշնորհ և հարազատ աշակերտ Եղիշէ Արքեպիսկոպոս Տէրտէրեան՝ Եղիվարդը՝ Երուսաղէմի 95-րդ պատրիարքը:

1930-ական թուականներէն սկսեալ «ՍԻՈՆ»-ի էջերուն մէջ տպագրուած են Եղիվարդի բանաստեղծական, գրական, քարոզչական անդրանիկ էջերը, որոնք յետա-

գալին Երուսաղէմի Հայոց Վանքի Տպարանէն լոյս տեսան առաձին գիրքերով:

1957-1960 թուականներուն «ՍԻՈՆ»-ը խմբագրած է Տ. Շնորհք եպիսկոպոս Գալուստեան (ապա պատրիարք Կ. Պոլսոյ):

Եղիշէ Պատրիարք Տէրտէրեանի մահէն վերջ, 1990-էն սկսեալ 18 տարիներ շարունակ «ՍԻՈՆ»-ի խմբագրապետութիւնը վարած է Թորգոմ Պատրիարք Մանուկեան, ճոխացնելով անոր քերթողական, կրօնական, պատմական և իմացական բաժինները բազմաթիւ յօդուածներով:

2009-2011 տարիներուն «ՍԻՈՆ» կարճատեւ դադար մը կ'ունենայ իր խմբագրապետին՝ Թորգոմ Պատրիարքին յառաջացեալ տարիքին պատճառաւ:

Թորգոմ Պատրիարքի մահէն վերջ, 2012-ին «ՍԻՈՆ» կը վերսկսի հրատարակուիլ, սակայն այդ տարի կը տպագրուի միայն մէկ յատուկ թիւ, անոր վախճանման առիթով:

2013-ին դարձեալ կը հրատարակուի միայն մէկ թիւ, նորէն յատուկ, սակայն այս մէկը նուիրուած Երուսաղէմի 97-րդ Նորընտիր պատրիարք՝ Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեանի գահակալութեան:

1999-էն մինչօրս Նուրհան Պատրիարք Մանուկեանի կրօնական ու բարոյախրատական յօդուածները կը զարդարեն «ՍԻՈՆ»-ի էջերն՝ իբրեւ խմբագրականներ ու քարոզներ:

2014-էն սկսեալ Նորին Ամենապատուութիւնը հաւատարիմ մնալով իր ուխտին, «ամբողջ և անսակարկ էութեամբ նուիրուեցաւ այս դարաւոր և փառաւոր Հաստատութեան բարի ու շինիչ սկզբունքներուն», փափաքեցաւ հսկել «ՍԻՈՆ»-ի բարւոք ընթացքին և Տէրտէրեանական շունչով պահել խմբագրապետութեան այնքան դժուարին պարտականութիւնը՝ հետեւելով իր արժանաւոր հոգեւոր հօրը և ուսուցչին Եղիշէ Պատրիարք Տէրտէրեանին:

Մինչեւ 1966-ի վերջին թիւը «ՍԻՈՆ» լոյս կը տեսնէր իբր ամսաթերթ: 1967-ին դարձաւ երկամսեայ հրատարակութիւն մը, իսկ 1984-էն ցայսօր «ՍԻՈՆ» կը հրատարակուի իբրեւ եռամսեայ ամսագիր:

2018 տարին յոբելինական տարի մըն է Ս. Աթոռոյս համար և յոբելեարներէն մին՝ Պատրիարքութեան «ՍԻՈՆ» պաշտօնաթերթին է, որ կը բոլորէ Նոր շրջանի 90-ամեակը: Այս առթիւ Սուրբ Աթոռոյս Գահակալին ջանքերով և յօժարութեամբ, Պատրիարքութեանս Կիւլպէնկեան Մատենադարանի և Հայաստանի Ազգային Գրադարանի միջեւ, 2017 թուականի Նոյեմբեր 9-ին, ստորագրուեցաւ համագործակցութեան, փոխըմբռնման յուշագիր-պայմանագիր: Համագործակցութեան առաջին պտուղները քաղեցինք մէկ-երկու ամիս վերջ՝ «ՍԻՈՆ»-ի բոլոր թիւերուն թուային տարբերակները համացանցին մէջ տեսնելով:

«ՍԻՈՆ»-ի այս 90-ամեակի առիթով մեր խորին շնորհակալութիւնը կը յայտնենք բոլոր անոնց՝ որոնք իրենց մտքի և սրտի տուրքերով ճոխացուցին հանդէսը և կարելի ըրին ու ապահովեցին անոր հրատարակութիւնը Նոր շրջանի սկիզբէն՝ 90 տարիներ շարունակ: Շնորհակալութիւն մեր պատուարժան աշխատակիցներուն և մեր ազնիւ ընթերցողներուն: Որքան ատեն որ հայուն հաւատքը, հայուն Եկեղեցին և անոր նուիրական աւանդութիւնները հարուածներու կրնան ենթարկուիլ ներսէն ու դուրսէն, «ՍԻՈՆ» իր բարձրագոյն կոշտմին հաւատարիմ, պիտի հնչեցնէ իր ճշմարտութեան և արդարութեան, սիրոյ և եղբայրութեան ձայնը այս բարձունքէն: Եւ այսօր գեղեցիկ հանգրուանի մը հասած և նոր հորիզոններու սեմին «ՍԻՈՆ»-ի խմբագրութիւնը խորապէս կը գիտակցի այն ծանր պատասխանատուութեան՝ որ իր բաժինն է, բայց միաժամանակ ան ապահով է և վստահ թէ, ինչպէս անցեալին՝ այժմ եւս Հայ Երուսաղէմի հաւատարիմ հայորդիներ, Սփիւռքի բոլոր անկիւններէն պիտի շարունակեն իրենց քաջալերանքն ու բարոյական աջակցութիւնը, միշտ յօգուտ Հայ Եկեղեցիին և Հայ ժողովուրդին:

Ուրեմն՝ «ՍԻՈՆ» կը շարունակէ իր դարաւոր ուղին, ի սփոփանս և ի հրճուանս հայ մշակոյթի, նամանաւանդ կրօնի ու հայագիտութեան «ուխտի մանկամը»:

Նկատի ունենալով «ՍԻՈՆ»-ի բացառիկ դիրքը իբր «Նախապետ» Ս. Աթոռոյ, անոր աւանդական նուիրականացած բժախնդրութիւնը այն ամէն ինչի նկատմամբ՝ որ հրատարակութեան մը ներքին և արտաքին արժանիքները կը կազմեն, կը մաղթենք ի սրտէ, որ ան նոյն ոգիով և սկզբունքներով շարունակէ իր ընթացքը:

90-ամեայ յոբելեանի քօղը, որ կ'իջնէ «ՍԻՈՆ ՆԱՀԱՊԵՏ»-ի ալեհեր ճակտին, թող դառնայ լոյսի թափանցիկ շղարշ, աւետելու այգաբացը՝ կրկնապէս ադամանդեայ նոր տարեդարձներու:

